*

Մումիտրոլի բնակիչներից մի քանիսը

Մումիտրոլը հետաքրքրասեր ու սիրալիր տրոլ է: Արկածների համար ուշքը գնում է, մանավանդ երբ իր ընկերների հետ պիտի ճամփորդի: Իսկ եթե արկածը չափազանց վախենալու է դառնում, նա իր Մումիմայրիկի կարիքն է ունենում:

Մումիմայրիկն աշխարհի տեսած տրոլ է, ամեն դեպքում այդպես է ասում: Երբեմն կարոտում է իր բուռն արկածները, որ ունեցել է երիտասարդության տարիներին: Այդ ժամանակ փակվում է իր սենյակում ու հուշեր գրում իր դեգերումների մասին:

Քիչ անց, դժվարությամբ ձյունը ճեղքելով, հայտնվեց Թու–թիքին:

— Երեկոյան տա՛նը մնացեք, որովհետև տիկինը շուտով գալու է:

— Ի՞նչ տիկին,— զարմացավ Մումիտրոլը:

— Սառնամանիքը,— պատասխանեց Թու–թիքին:

— Սառնամանիքը տիկի՞ն է:

— Այո՛, նրան Սառցե տիկին են անվանում: Եվ նա շատ գեղեցիկ է: Բայց եթե նայես ուղիղ նրա դեմքին, իսկույն սառույց կդառնաս: Ու ով ասես, կկարողանա քեզ պաքսիմատի պես մանր փշուրների վերածել: Ես գնում եմ՝ լոգարանում փակվեմ:

Մումիտրոլն ու Պստլիկ Մուն գնացին Թու–թիքիի հետևից, որովհետև չէին ուզում մնալ առանց ընկերակցության, երբ Սառցե տիկինը վրա հասներ:

Մումիհովտի ճանապարհին նրանք հանդիպեցին մի փոքրիկ սկյուռիկի, որին Գեղեցիկ պոչիկով սկյուռիկ էին անվանում:

— Ուժեղ սառնամանիք է սպասվում: Փակվի՛ր փչակիդ մեջ,— ասաց Թու–թիքին:

— Իսկ իմ կոնը ոչ մի տեղ աչքներովդ չի՞ ընկել: Կորցրել եմ:

— Չէ՛,— ասաց Թու–թիքին:— Տե՛ս, ասածս չմոռանա՛ս:

Բայց սկյուռիկն արդեն հեռացել էր:

— Բայց ես նկատի ունեի…— սկսեց Մումիտրոլը:

— Լա՛վ, հանգստացի՛ր,— ասաց Թու-թիքին:— Ո՞վ իմանա, գուցե մենք էլ սկսենք կամաց-կամաց սիրել Հեմուլին:

Ունկն ուժասպառ փուլ եկավ ձյան վրա: Ինքը երբեք չի գտնի Հեմուլին: Ունկը հասկանում էր, որ պետք է հետ դառնալ, բայց ձյունը ծածկել էր բոլոր հետքերը: Նա երբեք իրեն այդքան անօգնական չէր զգացել:

Այդ պահին հիշեց իր գայլ եղբայրներին: Գուցե նրա՞նք կարողանան իրեն փրկել: Նա քիթը բարձրացրեց դեպի աստղերը ու ոռնաց: Եվ գայլերը ոռնացին ի պատասխան: Ձայներն այնքան մոտիկ էին, որ Ունկը լեղաճաք եղավ:

ամբողջական գիրքն այստեղ է՝

Bookmark